ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07»

ք. Մարտունի « 15 » ապրիլի 2020թ.

Մարտունու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գուրգեն Հակոբյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մարտունու համայնքապետարանի վարչական շենք տանիքին 80-100 կվտ/ժ հզորությամբ ֆոտովոլտային վահանակների տեղադրման, <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Միերյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքերի տանիքներին 300-400լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչների տեղադրման աշխատանքների նախագծերի պատրաստում և ծախսերի գնահատում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[16]

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[17]

2.4.6 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝ ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին, բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին: [18]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armep համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագր պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցո Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համա հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատո ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմա կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցվ ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրվ հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 810 000 (ութ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[21]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[23]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
Մարտունու համայնքապետարան	**«Հազարաշեն» ՍՊԸ**
ք.Մարտունի, Շահումյան 2	**ք.Երևան,Պ.Սևակի փող.,1**
ՀՎՀՀ 08203584	**ՀՎՀՀ՝ 01816381**
Հ/Հ 900142121079	**Բանկ՝Արդշինբանկ ԲԲԸ**
ՀՀ ՖՆ կենտրոնականգանձապետարան	**ՀՀ՝ 2470103171510000**
Համայնքի ղեկավար՝	**Տնօրեն՝**
Ա.Ավետիսյան---------- (ստորագրություն)	**Գ. Հակոբյան** ---------- (ստորագրություն)
Կ.S.	Կ.S.

Հավելված N 1
« 15 » ապրիլի 2020 թ. կնքված
ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200	Մարտունու համայնքապետարանի վարչական շենք տանիքին 80-100 կվտ/ժ հզորությամբ ֆոտովոլտային կայանի տեղադրում, <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Մհերյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ՝ մակերես 398ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 1670ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 702ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 702ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 398ք/մ շենքերի տանիքներին 300-400լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչների տեղադրում: Նախագիծ-նախահաշվային փաստաթղթերը կազմել՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ N 273-Ն հրամանի համաձայն՝ աշխատանքային նախագիծ: Չափագրումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով: Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին	դրամ	810 000	1	ք.Մարտունի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացույցային օրվա ընթացքում

		և ԳՈՍՏ-ի պահանջներին: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ԳՈՍՏ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի: Անհրաժեշտ լիցենզիա՝ Քաղաքաշինական փաստաթղթերի ինժիներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործնեության Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանց, հիդրոտեխնիկական ներդիր: Նախագիծ-նախահաշիվ ներկայացնել 5 օրինակ էլեկտրոնային կրիչներով:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մարտունու համայնքապետարան
Ք.Մարտունի, Շահումյան 2
ՀՎՀՀ 08203584
Հ/Հ 900142121079
ՀՀ ՖՆ կենտրոնականգանձապետարան
Համայնքի ղեկավար՝

Ա.Ավետիսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հազարաշեն» ՍՊԸ
Ք.Երևան,Պ.Սևակի փող.,1
ՀՎՀՀ՝ 01816381
Բանկ՝Արդշինբանկ ԲԲԸ
ՀՀ՝ 2470103171510000
Տնօրեն՝

Գ. Հակոբյան ----------
/ստորագրություն/
Մ.Տ

Հավելված N 2
«15» ապրիլ 2020 թ. կնքված
ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	Նախագիծ-նախահաշվի պատրաստում													
		Վճարումը՝ Մարտունու համայնքապետարան 35%	...%	...%		100 %	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	100 %
		Վճարումը՝ սուբվենցիա 65%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մարտունու համայնքապետարան
ք.Մարտունի, Շահումյան 2
ՀՎՀՀ 08203584
Հ/Հ 900142121079
ՀՀ ՖՆ կենտրոնականգանձապետարան
Համայնքի ղեկավար՝

Ա.Ավետիսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հազարաշեն» ՍՊԸ
ք.Երևան,Պ.Սևակի փող.,1
ՀՎՀՀ՝ 01816381
Բանկ՝Արդշինբանկ ԲԲԸ
ՀՀ՝ 2470103171510000
Տնօրեն՝

Գ. Հակոբյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

15.04.2020թ. «ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԾՐԱԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27.04.2020թ.

ք.Մարտունի

Մարտունու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գուրգեն Հակոբյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով գնման պայմանագրի 7.5 կետը

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին N **ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով** գնման պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝ Մարտունու համայնքապետարանի վարչական շենք տանիքին 80-100 կվտ/ժ հզորությամբ ֆոտովոլտային վահանակների տեղադրման, <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Սահակյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքերի տանիքներին 300-400լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչների տեղադրման . <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Սահակյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի, «Մարտունու Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեական կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Մարտունու մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի, «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի հոսանքի մատակարարման մալուխների նախագծերի պատրաստում և ծախսերի գնահատում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն):

1.2 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին N **ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով** գնման պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետը փոփոխել և Կատարողի մատուցած ենթակա ծառայության դիմաց վճարել 891 000 (ութ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ:

1.3 N **ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-20/07 ծածկագրով** գնման պայմանագրի հավելված N 1 շարադրել հետևյալ կերպ

Ծառայության						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*
1	71241200	Մարտունու համայնքապետարանի վարչական շենք տանիքին 80-100 կվտ/ժ հզորությամբ ֆոտովոլտային կայանի տեղադրում, <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ	դրամ	891 000	1	Ք.Մարտունի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրացույցային

		Մհերյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ՝ մակերես 398ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 1670ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 702ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 702ք/մ, <<Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ՝ մակերես 398ք/մ շենքերի տանիքներին 300-400լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչների տեղադրում: <<Մարտունի քաղաքային համայնքի Սմբատ Մհերյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի, «Մարտունու Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Մարտունու մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի, «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի հոսանքի մատակարարման մալուխներ: Նախագիծ-նախահաշվային փաստաթղթերը կազմել՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ N 273-Ն հրամանի համաձայն՝ աշխատանքային նախագիծ: Չափագրումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով: Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ԳՈՍՏ 21.511-					օրվա ընթացքում

		83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի: Անհրաժեշտ լիցենզիա՝ Քաղաքաշինական փաստաթղթերի ինժիներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանց, հիդրոտեխնիկական ներդիր: Նախագիծ-նախահաշիվ ներկայացնել 5 օրինակ էլեկտրոնային կրիչներով:					

1.4 Սույն համաձայնագրում չնշված, N **ԳՄՄՀ-ԳՀՇՁԲ-20/07 ծածկագրով** գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.5 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև կնքված N **ԳՄՄՀ-ԳՀՇՁԲ-20/07**» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

1.6 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանակն ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մարտունու համայնքապետարան **Ք.Մարտունի, Շահումյան 2** **Հ/Հ 900142121079** **ՀՎՀՀ 08203584** **ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան** **Համայնքի ղեկավար՝** **Ա.Ավետիսյան**_____ (ստորագրություն) Կ.Տ	Հազարաշեն ՍՊԸ Ք.Երևան, Պ.Սևակի փող. 1 Արդշինբանկ ԲԲԸ Հ/Հ 2470103171510000 ՀՎՀՀ 01816381 Գ.Հակոբյան_____ (ստորագրություն) Կ.Տ